ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «2018-2022 թվականների ժամանակահատվածի կարիքների համար՝ Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հուլիսի 10-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով պայմանագրում 2018 թվականի նոյեմբերի 1-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Պայմանավորված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների 2018-2022 թվականներին մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ բնապահպանության նախարարության սկզբունքների և մոտեցումների վերանայմամբ՝ ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածածկ տարածքների մաքրման առաջնահերթությամբ, ինչպես նաև այդ նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրով նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի ավելի քան 20 տոկոսով համընկնումներով՝ նախկինում մաքրված տարածքների հետ:
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանավորված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների 2018-2022 թվականներին մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ բնապահպանության նախարարության սկզբունքների և մոտեցումների վերանայմամբ՝ ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածածկ տարածքների մաքրման առաջնահերթությամբ, ինչպես նաև այդ նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի ավելի քան 20 տոկոսով համընկնումներով՝ նախկինում մաքրված տարածքների հետ, նպատակահարմար էր լուծել հիշյալ պայմանագիրը և այդ նպատակով 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները նպատակաուղղել բնապահպանության ոլորտում այլ ծրագրերի իրականացմանը՝ բացառելով հետագա տարիներին նման դեպքերը: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետով և Պայմանագրի 8.8 կետով՝ փոխադարձ համաձայնությամբ լուծվել է Պայմանագիրը:
Փոփոխության հիմնավորում՝	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետ, պայմանագրի 8.8 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **բնապահպանության նախարարություն:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
(374 11) 818 506

№ 5/062/5020 -18
«31» «10» 2018 թ.

«Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի
տնօրեն Ա.Քոչարյանին
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, Գարդմանի 6

Հարգելի պարոն Քոչարյան

Պայմանավորված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների 2018-2022 թվականներին մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ բնապահպանության նախարարության սկզբունքների և մոտեցումների վերանայմամբ՝ ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածածկ տարածքների մաքրման առաջնահերթությամբ, ինչպես նաև այդ նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի ավելի քան 20 տոկոսով համընկնումներով՝ նախկինում մաքրված տարածքների հետ, նպատակահարմար է լուծել հիշյալ պայմանագիրը և այդ նպատակով 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները նպատակաուղղել բնապահպանության ոլորտում այլ ծրագրերի իրականացմանը՝ բացառելով հետագա տարիներին նման դեպքերը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետով և Պայմանագրի 8.8 կետով՝ առաջարկում եմ փոխադարձ համաձայնությամբ լուծել Պայմանագիրը:

Խնդրում եմ հինգ աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Ձեր դիրքորոշումը: Կից ներկայացնում եմ Պայմանագրի լուծման համաձայնագրի նախագիծը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝
պաշտոնակատար Վ.Ջիլավյան

10/31/2018

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

Ֆինանսատնտեսական վարչության
Բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Լ.Զոհրաբյան 011 818 514

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«10» հուլիսի 2018թ. թիվ ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01 պայմանագրի

ք.Երևան «01» «11» 2018թ.

Բնապահպանության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Քոչարյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018 թվականի հուլիսի 10-ին կողմերի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրի 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2018 թվականի հուլիսի 10-ին կողմերի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծել:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Բնապահպանության նախարարություն	**«Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, Գարդմանի 6
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007763	ՀՀ 115004674137
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08100179
Բնապահպանության նախարարության	«Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի
գլխավոր քարտուղարի ժ/պ	տնօրեն
Վ.Ջիլավյան	***Ա.Քոչարյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Ճ.Ճ.Շ.Շ.Ձ.
Ч.Д.С.Э.П.
08100179